



Մանհայմի Հայ Մշակութային Արարատ Միություն  
Armenischer Ararat-Kultur-Verein e.V.  
Postfach 420103- 68280 Mannheim

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### § 1

Անունը, Նստավայրը և Տնտեսական Տարի

1.  
Միության անունն է Մանհայմի Արարատ Հայ Մշակութային Միություն:
2.  
Միության նստավայրը Մանհայմում է և գրանցվելու է միությունների մատյանում:
3.  
Տնտեսական տարին լինելու է օրացուցային տարին:

## § 2

### Նպատակը

1.

Միությունը ինքնուրույն է գործում, դա առաջին հերթին չի հետապնդում ինքնատնտեսական նպատակներ:

2.

Միության նյութական միջոցները կարող են օգտագործվել միայն կանոնադրությանը նպաստող նպատակների համար:  
Անդամները միության նյութական միջոցներից չեն ստանում որևիցե նվիրատվություններ:

3.

Ոչ մի անձ իրավունք ունի այն ծախսերից, որոնք օտար են ընկերության նպատակներին, համեմատաբար բարձր հատուցումներով, հովանավորվելու:

4.

Միությունը անկախ է, ունի ոչ քաղաքական, ոչ էլ կրոնական նպատակներ:

5.

Միության նպատակն է Գերմանիայում ապրող Հայերին միմիանց հետ կապի մեջ պահել, համախմբվածության, լեզվի, գրականության և արվեստի, ինչպես նաև գերմանացիների հետ հարաբերությունների և նրանց մշակույթին ծանոթանալուն աջակցելը: Հայկական ավանդույթի պահպանումը, հայկական այլ հիմնարկությունների, միությունների հետ միասին համագործակցությունը, ինչպես նաև կարելիության չափով Հայաստանի Պետությանը և Լեռնային Ղարաբաղին (Արցախ) ֆինանսական և այլ ձևով օժանդակել:

